«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ «Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը տարբերակված մեթոդներով»

Հետազոտող ուսուցիչ՝ Նինա Սուքիասյան
Մենթոր ուսուցիչ՝ Լիլիթ Չալյան
Դպրոց՝ Արմավիրի մարզ, Արևիկի միջնակարգ դպրոց

Արմավիր 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն …….....3

Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը տարբերակված մեթոդներով…….....5

Կրթական կարիքներին ուղղված մանկավարժական աշխատանքների իրագործում…. ……..13

Մանկավարժական հմտությունների և մեթոդների միջոցով կրթական կարիքները բավարարելու գործնեության ծավալում……17

Եզրակացություն ……..23

Օգտագործված գրականության ցանկ …….....24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Թեման արդիական է նրանով, որ 2000-ականների սկզբին համընդհանուր ձևավորման սկզբունքները տեղափոխվեցին կրթության ոլորտ՝ վերանվանվելով ուսումնառության համընդհանուր ձևավորում (ՈՒՀՁ)։ Այդ պրակտիկան լայն տարածում գտավ ներառման կրթության համատեքստում՝ նպատակ ունենալով կրթական համակարգերը հարմարեցնելու բոլոր սովորողների կարիքներին ու առանձնահատկություններին։ :Ուսումնառության համընդհանուր ձևավորման հիմքում այն սկզբունքն է, որտեղ նյութի բովանդակությունը ակադեմիական փորձառության ամենակարևոր մասն է կազմում, իսկ ուսուցիչները սովորողներին դասապրոցեսում ներգրավելու համար բազմազան միջոցներ են կիրառում և ցուցաբերում։ Այս մոտեցումն ուղղված է ամբողջ դասարանին և հիմնված է աշակերտների անհատականության, կենսափորձի, սովորելու ոճի, մշակութային ու կրոնական գիտակցության, հաշմանդամության փաստի և լեզվական ընդունակությունների համար դասավանդման արդյունավետ ձևեր գտնելու և աշակերտների առանձնահատկությունների նկատմամբ հարգանքի վրա։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ՝

1.Երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտում:

2. Թեմաներ դասավանդելիս, ուսուցանվող նյութի հարմարեցումը սովորողների անհատական առանձնահատկություններին։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

- ✓ Ներկայացնել ուսումնական համընդհանուր ձևավորման ուղղությամբ իրականացված հետազոտությունները՝ կրթական կարիքները բացահայտելու,
- ✓ Սովորողների տարբեր տարիքային խմբերին համապատասխան տարբեր մեթոդների ընտրությամբ ուսուցման առանձնահատկությունները դասակարգելու
- ✓ Երեխաների ուսուցման ու դասավանդման տարբեր մեթոդների համադրությամբ երեխաների երևակայության, ինքնուրույն

մտածողության և աշխարհայացքի ձևավորմանը ուղղված ռազմավարության մշակում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հետազոտության համար հիմք են ծառայել՝

- ✓ Համեմատական վերլուծության,
- ✓ Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման ու ընդհանրացման ,
- ✓ զրույցների, քննարկումների կազմակերպման մեթոդները:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտում:

1.1. Կրթական կարիքներին ուղղված մանկավարժական աշխատանքների իրագործում :

2.2. Մանկավարժական հմտությունների և մեթոդների միջոցով՝ կրթական կարիքները բավարարելու գործնեության ծավալում :

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ և ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տեսական նշանակությունն՝

- ✓ Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել ուսումնառության նպատակով,
- ✓ Կարող են տեղայնացվելով կիրառվել այլ թեմաների դասավանդման ընթացքում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հետազոտական աշխատանքը կազմված է՝

Ներածությունից, մեկ գլխից, երկու ենթագլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից:

1.Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը տարբերակված մեթոդներով :

«Բոլոր վարժապետների մեջ պետք է այնքան սեր ու միություն լինի, որ այդ զգալի լինի աշակերտներին:Ոչ մի վարժապետ մի ուրիշ վարժապետի չպետք է բամբասի ժողովրդի մեջ, բայց ժողովրդի մեջ ամեն մեկն ազատ է նկատողությունները մյուսի թերության վրա անել սոսկ փաստեր առաջ բերելով, առանց պատվի դիպչող բառեր գործի դնելու» Ղ. Աղայան

Հանրակրթության համակարգում կարևոր օղակ է տարրական դպրոցը, որի նպատակը կրտսեր դպրոցականների մտավոր, հոգեկան գործընթացների, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության զարգացումն է, հայեցի հոգեկերտվածքի և արժեհամակարգի ձևավորումը: Նշված նպատակների արդյունավետ իրականացման գործընթացում կարևոր է տարրական դպրոցի ուսուցիչը, ում մասնագիտական պատրաստությամբ, կոմպետենտությամբ և աշխատանքի որակով է նաև պայմանավորված մեր հասարակության առաջընթացը: Տարրական դպրոցի ուսուցիչը միաժամանակ պատասխանատու է երեխայի առողջության և կյանքի, գիտելիքների յուրացման մակարդակի, կարողությունների և հմտությունների ձևավորման, նրա սոցիալականացման, կրթության շարունակականության ապահովման համար:Ուսուցիչը պետք նպաստի, որ երեխան դրսևորի և զարգացնի իր բոլոր ընդունակություններն ու ձիրքերը և երջանիկ լինի միայն այնպիսի հասարակության մեջ, որտեղ զգում է, որ ինքը պահանջված է, պիտանի, որտեղ իրեն արհեստականորեն չեն մեծարում և չեն նսեմացնում: Այսպես պետք է իրեն զգա երեխան այն հասարակությունում, որում ինքն ապրում է[1]:

Կրթական կարիքների ուսումնառությունը արդիական է ինչպես գիտական-տեսական, այնպես էլ գործնական իմաստով:Քանի որ կարիքների մասին տեսական գիտելիքները անհատականության տեսության հիմքն են, կրթական կարիքների ուսումնասիրությունը թույլ է տալիս վերլուծել անհատի գործունեությունը որոշող սուբյեկտիվ գործոններ, նկարագրել նրա կրթական գործունեության բնույթը, ուսումնասիրել ամենակարևոր խթաններն ու պայմանները:Նրա ընդգրկումը կրթական միջավայրում, հետևում է մեխանիզմների ձևավորմանը, որոնք կարգավորում են անհատի գործունեության և զարգացման գործընթացները ինչպես

[1] Ամոնաշվիլի Շ.Ա., Բարև երեխաներ, Ձեռնարկ ուսուցչի համար, 1990 257, էջ 50-52

կրթության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս:Տեսական վերլուծության հիման վրա կարելի է պնդել, որ կրթական կարիքների կրթությունը ոչ միայն հնարավոր է, այլև անհատականության ձևավոնման կենտրոնական գործոններից մեկն է:

Ինչպես գիտենք,ուսուցումը, անցյալի փորձի արդյունքում ձևավորված ադապտիվ անհատական վարքի փոփոխությունն է: Այդ փորձի ձեռքբերումը պայմանավորվում է ճանաչողական դրդապատճառներով և նպատակներով:

Ուսուցման շնորհիվ մարդու գիտելիքները թարմանում են, ձեռք են բերվում նոր հմտություններ և կարողությունները, ինչը հանգեցնում է առավել հարմարվողական վարքի ձևավորմանը:Սակայն ուսումնական գործընթացը ունի դժվարություններ, որը հնարավոր չէ ամբողջովին վերացնել. այն երեխային ուղեկցում է ամբողջ կյանքի ընթացքում, սակայն համապատասխան միջամտության դեպքում աշակերտը կարող է մեծ հաջողություններ ունենալ և առաջընթաց գրանցել:Կան երեխաներ, որոնք արտաքինից պայծառ և խելացի երեխաների տպավորություն են թողնում, սակայն չեն կարողանում ցուցաբերել նույն առաջադիմությունը, ինչ իրենց հասակակիցները, այդ պատճառով դա երբեմն համարվում է թաքնված հաշմանդամություն, որը կարծես անջրպետ է երեխայի ներուժի և նրա իրական առաջադիմության միջև:

Ինչպես նշում են շատ հետազոտողներ, գիտելիքի համակարգի զարգացումը, որը զուգորդվում է համապատասխան հմտությունների ձեռքբերման հետ, համարվում է «ուսուցման հիմնական բովանդակությունը և ամենակարևոր խնդիրը»:Ուսուցչի համար պետք է գերխնդիր լինի ճանաչել իր աշակերտներին: Ուսուցիչը պետք է կարողանա մեկ քայլ առաջ տեսնել սեփական գործունեության արդյունքները: Պետք է ձևավորի սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական կարողությունները, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանական հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունները: Նա իր առջև պետք է ունենա հետևյալ **խնդիրները՝** զինել սովորողներին գիտելիքներով, ձևավորել կարողություններ և հմտություններ, մասնավորապես՝

ճանաչողական, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության ընթացքում, ձևավորել արժեքային համակարգ[2]:

Կրթական կարիքների նկատմամբ մանկավարժական բացահայտման էությունը հետևյալն է.

1) կրթական գործընթացի հիմնական առարկաների (դասավանդման և ուսուցման) հետ կապված կրթական կարիքների ուսումնասիրման անհրաժեշտությունը.

2) ուսումնական հաստատության ներքին և արտաքին գործունեության քաղաքականության և ռազմավարության որոշման անհրաժեշտությունը՝ ելնելով բացահայտված կարիքներից.

3) կրթական գործընթացի բոլոր առարկաների կրթական կարիքների ձևավորման և բավարարման համար մանկավարժական պայմանների մշակման անհրաժեշտությունը:

Մանկավարժական ուսումնասիրությունը շատ արժեքավոր նյութ է տալիս կրթության հետագա բարեփոխման համար, քանի որ այն շարունակելուց առաջ անհրաժեշտ է իմանալ կրթական գործընթացում ընդգրկված սոցիալական համայնքների կարիքները և միայն դրա հիման վրա կատարել դրանում անհրաժեշտ վերափոխումները:

21-րդ դարը մարդու իրավունքների պաշտպանության տեսակետից առանցքային ժամանակաշրջաններից է: Միջազգային կազմակերպություններն ու շատ երկրների կառավարություններ մի շարք իրավական ակտերի մշակման և ներդրման միջոցով փորձում են մարդկանց կյանքի և կենսագործունեության համահավասար պայմաններ ապահովել: Այս գործընթացում, բնականաբար, արևմտյան երկրներն առավել մեծ արդյունքներ են գրանցել, և նրանց առաջավոր փորձի կիրառումը հնարավորություն է տալիս մյուս երկրներին նույնպես այդ ուղղություններով իրականացնել նպատակաուղղված միջոցառումներ: Այս գործընթացում ուղենիշային դերակատարում ունեն մի շարք միջազգային իրավական

[2] Կուրտեցկի Վ. Ա., Մանկավարժական հոգեբանական հիմունքներ, Երևան,1976 էջ 19 :

փաստաթղթեր, որոնք, ընդունվելով տարբեր պետությունների կողմից, հիմք են հանդիսանում տեղական օրենսդրության մշակման համար:

1990 թվականի մարտին Ջոմտիենում (Թայլանդ) կայացավ «Կրթություն բոլորի համար» ծրագիրը, որտեղ ընդունվեց Ջոմտիենյան համաշխարհային հռչակագիրը բոլորի հավասար կրթության և հավասար իրավունքների մասին՝ նպատակ ունենալով ապահովել ավելի որակյալ կրթություն և միջավայր բոլորի համար՝ անկախ տարիքից, սեռից, այլ բնութագրերից[3]:

Համաձայն հռչակագրի՝ դպրոցները պետք է կրթություն ապահովեն բոլոր երեխաների համար՝ անկախ նրանց ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հուզական, լեզվական կամ այլ առանձնահատկություններից:

Ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ **Կրթական կարիքներից** առանձնացվում է հետևյալ դասակարգումը՝

- **հաղորդակցում և փոխազդեցություն**
- **իմացական ոլորտ և ուսուցում**
- **սոցիալական, հուզական և հոգեկան առողջության դժվարություններ**
- **զգայական և/կամ ֆիզիկական կարիքներ**[4]

Բոլոր ժամանակներում մանկավարժները փնտրել են տվյալ ժամանակի երեխայի ուսումնառությունը արդյունավետ կազմակերպելու սկզբունքներ ու մոտեցումներ: Չնայած ժամանակակից մանկավարժությունը բազմաբնույթ և լայն մոտեցումներ է մշակել, այնուամենայնիվ կրթական պահանջներն այսօր շատ արագ են փոխվում, և ուսուցումը դարձյալ ներքին և արտաքին մարտահրավերներ ունի:

Ժամանակակից մանկավարժության հիմնական մոտեցումներից է դասավանդումը սովորողների ուժերին, կարողություններին, նախասիրություններին հարմարեցնելը: Նման դասավանդման արդյունավետ մոտեցումներից է

[3] Ներառական կրթության ռազմավարություններ ,Երևան 2019,էջ 7:
[4] Ներառող դասավանդում, Երևան 2023, էջ՝ 32

տարբերակված դասավանդումը, որը հիմնվում է սովորողների կարիքների և նախասիրությունների վրա

Որպես դասավանդման սկզբունք՝ տարբերակված դասավանդումը բաղկացած է 4 առանցքից՝

1.Բովանդակություն

2.Գործընթաց

3.Վերջնարդյունքի ներկայացում

4.Ուսումնական միջավայր

Բովանդակությունն այն է, ինչը ուսուցիչը պարտավոր է իրականացնել դասարանում յուրաքանչյուր սովորողի համար: Բնականաբար այն չի կարող կամայական լինել, այն ամրագրված է պետական չափորոշչով, ինչը ուսուցիչը պարտավոր է իրականացնել դասարանում յուրաքանչյուր սովորողի համար: Սակայն քանի որ դասարանում սովորողների ընդունակությունները, նախնական գիտելիքները, ուսումնառության ոճն ու մտածողությունը տարբեր են, հետևաբար նրանց ուսուցանելու եղանակն ու մոտեցումներն էլ պետք է տարբեր լինեն: Արդյունավետ ուսումնառություն կազմակերպելու համար ուսուցիչը պետք է հաշվի առնի սովորողի մտածողության եղանակը:Ուսումնական գործընթացը տարբերակման մեթոդով կազմակերպելու հիմնական սկզբունքները, տարբերակման հայեցակետերը, կազմակերպման եղանակները մշտապես կախված են՝

• **առարկայի բովանդակությունից,**

• **կրթությանը ներկայացվող պահանջներից ու դասավանդման եղանակներից,**

• **աշակերտների անհատական կարիքներից:**

Ինչպես վերը նշեցինք՝ տարբերակված ուսուցումն ունի իր առանցքները, որոնցից մեկն էլ իրականացվող գործընթացն է: Կախված դասի նյութից և նպատակից՝ ուսուցիչը միևնույն ժամանակահատվածում սովորողներին կարող է բաժանել զույգերի կամ խմբերի: Ճկուն ուսուցիչը միևնույն ժամանակ կարող է հանձնարարությունները մի քանիսին բաշխել զույգային կամ անհատական

ուսուցմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սովորողներից ոչ բոլորն են զգում ուսուցչի աջակցության կարիքը, ոմանք էլ՝ մասնակի կամ ամբողջովին, կամ հաշվի առնելով մի քանիսի ուսումնառության ոճերն ու անհատական կարողությունները: Ուստի՝ մինչ ուսուցիչը ինչ-որ բան է բացատրում աշակերտներից մեկին, մյուսները կարող են ինքնուրույն աշխատել:

Խմբերի ձևավորումը կարելի է իրականացնել 2 եղանակով՝ միատարր և բազմատարր: Միատարր կառուցվածք ունեցող խմբերի առանձնահատկությունն այն է, որ տվյալ առարկայի շրջանակներում սովորողների ընդունակություններն ու հետաքրքրությունները գրեթե նույնն են, միևնույն խմբի մեջ ներառված աշակերտներին պետք է տրվի նույն առաջադրանքը: Պարտադիր չէ, որ խմբի անդամները համագործակցեն միմյանց հետ, տրված առաջադրանքները նրանք կարող են կատարել նաև ինքնուրույն, իրարից անկախ: Նման դեպքերում հնարավոր է ստեղծել ավելի մեծ խմբեր: Բազմատարր կառուցվածք ունեցող խմբերի առանձնահատկությունն այն է, որ սովորողների ընդունակություններն ու հետաքրքրություններն ակնհայտ տարբեր են: Այս դեպքում կարող է օգտակար լինել դերերի ճիշտ բաշխումը՝ ապահովելու, որ յուրաքանչյուր անդամ իր ընդունակությունների սահմաններում ներգրավվի խմբի աշխատանքներում: Նման խմբային աշխատանքն ապացուցում է այն տեսությունը, որ աշակերտները կարող են շատ արդյունավետ կերպով սովորել միմյանցից:

Տարբերակված դասավանդմամբ ուսուցման կազմակերպման հիմնական եղանակը խմբային աշխատանքն է, սակայն կարելի է զուգահեռ կիրառել զույգերով կամ անհատական ուսուցման եղանակները՝ կախված թեմայից և աշակերտների առանձնահատկություններից:

Տարբերակման մյուս եղանակը տարբերակումն է ըստ կարողությունների. այս դեպքում սովորողները բաժանվում են խմբերի՝ ըստ իրենց ընդունակությունների: Քանի որ խմբերի անդամներն ինքնուրույն են աշխատում, անհրաժեշտություն չկա ստեղծելու փոքր (3–5 անդամից բաղկացած) խմբեր: Յուրաքանչյուր աշակերտ իր առաջադրանքը կատարում է ինքնուրույն, մասամբ՝ անհատական մոտեցմամբ:

Խմբում ընդգրկված տարբեր ընդունակություններով աշակերտներին հանձնարարված աշխատանքները տարբերվում են իրենց բովանդակությամբ. օրինակ կարող ենք ունենալ 4 տեսակի առաջադրանք.

• Դուրս գրեք ձայնավոր հնչյունները:

• Հեքիաթի նկարները դասավորեք ըստ հաջորդականության:

• Թեման ամփոփեք այլ վերնագրերով:

• Պատասխանեք նշված հարցերին: Արդյունավետ համագործակցության հիմքում ընկած է աշխատանքի հավասար բաժանումը և փոխադարձ պատասխանատվությունը: Դրան կարելի է հասնել խմբի առանձին անդամներին որոշակի դեր-առաջադրանք տալով: Օրինակ՝ մեկը կարդում է, մյուսը գրի է առնում, մյուսը գտնում է հականիշները և հետևում է ժամանակին, և այսպես՝ շարունակ: Ինչպես արդեն նշել ենք, տարբերակված դասավանդման կառուցվածքային փուլերից հաջորդը վերջնարդյունքի ապահովումն է: Վերջնարդյունքն այն է, ինչ աշակերտը ստեղծում է դասի վերջում՝ բովանդակության յուրացումը ցուցադրելու համար: Այս փուլի արտահայտման եղանակները կարող են բազմազան լինել.

• գրավոր

• բանավոր

• ՏՀՏ միջոցներով

• պատկերավոր

• դերային :

Տարբերակված դասավանդման կայացման էական տարրերից վերջինը ուսումնական միջավայրի ստեղծումն է: Ինչ խոսք, դասավանդման բոլոր ձևերի ժամանակ էլ անհրաժեշտ է համապատասխան միջավայր ստեղծել. «տարբերակված դասավանդման միջավայր» ասելով պետք է նկատի ունենալ ուսուցչի ստեղծած ուսումնական միջավայրը թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական իմաստով: Ֆիզիկական միջավայրը դասի նպատակներից բխող համապատասխան դիդակտիկ նյութերի,

փորձանոթների և նյութերի, խմբային բաժանման հարմարեցվածության և այլնի ապահովումն է: Հոգեբանական միջավայրի ստեղծողը ուսուցիչն է. նա պետք է ապահովի դրական համագործակցություն, կիրառի կառավարման այնպիսի մեթոդներ, որոնք կապահովեն խթանող ուսուցման, ազատ արտահայտման, անկաշկանդ շփումների, դրական, տրամադրող, հարգալից միջավայր: Երկու դեպքում էլ պետք է նկատի ունենալ, որ «առանձնահատուկ պայման» ասելով չպետք է հասկանալ միայն ԿԱՊԿ ունեցող սովորողի համար հանրակրթական դպրոցում ստեղծվող պայմանները, այլ՝ բոլոր երեխաների արդյունավետ ներգրավումը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքներն ու առանձնահատկությունները:

Տարբերակված դասավանդման իրականացման ամենատարածված եղանակը համատեղ դասավանդումն է: Համատեղ դասավանդման մոդելը թիմի ներսում բոլոր անդամների միջև համագործակցության և հաղորդակցման ապահովումն է՝ ուղղված բոլոր սովորողների կրթական կարիքների բավարարմանը:

Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները խարսխված են ուսուցման երեք մոտեցումների վրա՝ **ճանաչողական, ռազմավարական և հուզական:** Ճանաչողական ուսուցումը վերաբերում է սովորողի՝ հասկացություններ ճանաչելու և մտապահելու կարողությանը: Սրան սովորաբար նպաստում է ուսուցչի աշխատանքը կամ տեքստի ընթերցումը:Ուսումնառությունը վերաբերում է որոշակի բովանդակությանը, սովորողի՝ հասկացություններին արձագանքելու կարողությանը կամ հմտություններին:Ուսումնառության ժամանակ սովորողը պետք է ծանոթանա (ճանաչի) և կարողանա հատուկ արձագանքել առաջադիր հարցմանը: Ուսուցման ցանկացած տեսակը իր մեջ պետք է ապահովի , ինչպես գրավոր առաջադրանքներ,այնպես էլ բանավոր պատասխաններ:Նյութի արդյունավետ յուրացումը վերաբերում է սովորողի՝ նյութը յուրացնելու մոտիվացիային:Առանց մոտիվացիայի՝ սովորողների կողմից յուրացումը մակերեսային է[5]:

[5] Ներառական կրթության ռազմավարություններ , Երևան 2019, էջ՝ 13:

1.1 Կրթական կարիքներին ուղղված մանկավարժական աշխատանքների իրագործում

«Գիտությունը լույս է տգիտությունը՝ խավար, գիտության լույսին կարելի է հասնել ջանասիրության և ինքնակրթության միջոցով»[6]

Կրթության համակարգում առանձնահատուկ կարևոր են երեխայի մասին տեղեկատվության փոխանակումն ու ճշգրիտ կարիքների գնահատումը, ուստի մանկավարժական կազմը պետք է կարողանա գնահատել և ամեն ինչ կազմակերպել՝ ելնելով երեխայի կարիքի վերաբերյալ տեղեկությունից: Մեր աշխատանքն է հասկանալ՝ ինչ է պետք երեխային, և ինչ կարողություններ ունի: Կրթական կարիքի ճշգրիտ գնահատումը ենթադրում է արդյունավետ միջամտություն, որն էլ նպաստում է կրթական նպատակների իրագործմանը: Պետք է հստակ տեսնել, թե որտեղ է երեխան և որոշել, թե որն է հաջորդ քայլը: Կարիքների գնահատումը կարելի է և պետք է կատարել ամեն օր, ամեն շաբաթ, քանզի միայն այս ձևով կարող ենք ճանաչել երեխայի հնարավորությունները: Պետք է տեսնել, թե որտեղ է երեխան, պետք է կարողանալ «կարդալ» երեխային և անհրաժեշտության դեպքում փոփոխել դասավանդման եղանակները, սակայն մինչ աշակերտին գնահատելը պետք է գնահատել դասի պլանը, որն ունի 2 չափանիշ՝ **ուսումնական պլանի բարդության աստիճանը և միջավայրի կազմակերպումը:** Պետք է գնահատել, թե որքանով է առաջադրանքն արդյունավետ աշակերտի համար, որքանով է մատչելի և համապատասխան վերջինիս կարողություններին: Չէ՞ որ Կրտսեր դպրոցականի **ուշադրության** հիմնական առանձնահատկությունը կամային ուշադրության թուլությունն է[7]: Զգալիորեն ավելի լավ է զարգացած ոչ կամածին ուշադրությունը: Այսինքն՝ ամեն մի նորը, ցայտունը, հետաքրքիրը ինքնին իր վրա է բևեռում աշակերտների ուշադրությունը: Ուստի այս տարիքում ուսումնական նյութը պետք է աչքի ընկնի իր զննականությամբ և արտահայտչականությամբ:

---

[6] Սիմոնյան Ց., Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության,Երևան,1971, էջ 148:

[7] Подласый И.П., Петагогика начальной школы: учеб.для студ.пед.училищ и колледжей, Москва, 2004

Նմանատիպ աշխատանքներում ուսումնական գործընթացն առավել արդյունավետ է, եթե կատարվում է թիմային ուսումնական աշխատանք:

Թիմային ուսուցումը պահանջում է պլանավորման և համագործակցության բարձր մակարդակ և լավագույնս աշխատում է, երբ ուսուցիչների միջև առկա է վստահության և միջանձնային համատեղելիության մթնոլորտ:Ուսուցման արդյունավետ կազմակերպման ձևերից է՝ «Ուսուցման կենտրոնների տեղափոխման մոդելով դասավանդում»: Այս մոդելը հատկապես արդյունավետ է բազմամակարդակ, բազմահամակազմ և ներառական դասարաններում դասավանդման համար: Դասավանդման այս ձևը նման է կենտրոնների, որտեղ աշակերտներն աշխատում են 3 փոքր խմբով.

1. նոր նյութի մատուցման,

2. ուղղորդված աշխատանքի,

3.ինքնուրույն աշխատանքի՝ ըստ սովորողների գիտելիքների և կարողությունների մակարդակի: Յուրաքանչյուր խումբ ունենում է առանձին նպատակ՝ իր կարողությունների մակարդակին համապատասխան, երբեմն նաև՝ առանձին թեմա: Դասարանում սեղանները վերադասավորվում են՝ կազմելով 3 առանձնացված կենտրոններ: Ուսումնական յուրաքանչյուր կենտրոնում նախապես բաժանված խմբերն աշխատում են նախօրոք ուսուցչից ստացած բանավոր կամ գրավոր հրահանգներով, իսկ աշխատանքային գործընթացն ինքնուրույն է կազմակերպվում, կամ էլ ուղղորդվում է ուսուցչի օգնականի կողմից: Աշակերտները դասի ընթացքում սահմանված որոշակի ժամանակահատվածում լինում են բոլոր երեք կենտրոններում՝ յուրաքանչյուր կենտրոնում անցնելով դասի համապատասխան փուլը և կատարելով պահանջվող գործողություններ՝ թիմային կամ անհատական աշխատանքի ձևով: Այսինքն՝ բոլոր երեք խմբերը դասի ընթացքում իրականացնում են նույն գործողությունները, սակայն տարբեր ժամանակահատվածներում: Ուսուցման կենտրոնների տեղափոխման մոդելով դասավանդումը պետք է ներառի հետևյալ երեք պարտադիր գործողությունները.

1 «Ես եմ անում» - Երբ ուսուցիչը բացատրում է նոր նյութը:

2 «Մենք ենք անում» - Երբ ուսուցիչը և աշակերտները միասին աշխատում են նյութի վրա:

3 «Դու ես անում» - Երբ աշակերտներն ինքնուրույն աշխատանք են կատարում: Աշխատանքի կազմակերպումը ուսուցման կենտրոնների տեղափոխման կենտրոններում կատարվում է հետևյալ հաջորդականությամբ. Ուսուցիչը նոր նյութի մատուցման կենտրոնում բացատրում է նոր նյութը 1- ին խմբին, նույն ժամանակ 2-րդ խումբն աշխատում է ուղղորդված աշխատանքի կենտրոնում, իսկ 3-րդ խումբը՝ ինքնուրույն աշխատանքի կենտրոնում: Կենտրոններում որոշակի ժամանակ աշխատելուց հետո խմբերը տեղափոխվում են հետևյալ կերպ.

♣ Նոր նյութի մատուցման կենտրոնի սովորողները տեղափոխվում են ուղղորդված աշխատանքի կենտրոն:

♣ Ուղղորդված աշխատանքի կենտրոնի սովորողները տեղափոխվում են ինքնուրույն աշխատանքի կենտրոն:

♣ Ինքնուրույն աշխատանքի կենտրոնի սովորողները տեղափոխվում են նոր նյութի մատուցման կենտրոն: Դասարանի 3 խմբերից յուրաքանչյուրը դասը ավարտում է որոշակի կենտրոնում: Հաջորդ դասին խմբերը դասը սկսում են նախորդ դասի ավարտին իրենց աշխատած կենտրոնի հաջորդ կենտրոնից: Համատեղ դասավանդման այս մոդելի կիրառման դրական կողմերն են.

1. Ինքնին պահանջում է տարբերակված դասավանդում բոլոր սովորողների համար:

2. Հաշվի առնելով սովորողների անհատական կարողությունները՝ դասի պլանավորման ժամանակ ապահովվում է վերջիններիս լիարժեք ներգրավվածությունը դասի բոլոր փուլերին:

3. Աշակերտները մեկ դասի ընթացքում հնարավորություն են ունենում լսելու նոր նյութը և աշխատելու ինչպես թիմով, այնպես էլ՝ ինքնուրույն[8] :

Համատեղ դասավանդման մոդելներն ըստ էության ունեն մի շարք առավելություններ, մասնավորապես մասնագիտական հմտությունների

[8] Մանուկ Խաչատրյան, Միեր Դավթյան, «Դասավանդման ժամանակակից մոտեցումներ և մեթոդներ», Երևան, 2019 , էջ 24-35,

փոխանակում, սովորողների կրթական կարիքները հասկանալու ավելի մեծ հնարավորություն, ընդհանուր կրթության շրջանակներում հատուկ կարիքներով սովորողների համար ավելի մեծ ծրագրային հնարավորություն, ինչը թույլ է տալիս նաև բարելավել այդ սովորողների հարաբերություններն իրենց հասակակիցների հետ, իսկ դասավանդող ուսուցիչների համար ավելի թեթև աշխատանքային մթնոլորտ է ստեղծում: Արդյունավետ կողմերից մյուսն այն է, որ ուսումնառության դժվարություններ ունեցող սովորողները միաժամանակ չեն ստանում հատուկ մանկավարժի կամ այլ աջակցող մասնագետների ծառայություններ, այլ շահում են ուսուցիչ-աշակերտ քանակական հարաբերակցության նվազեցումից և համատեղ դասավանդման ժամանակ կիրառվող մեթոդների բազմազանությունից

Արդի մանկավարժության մեջ առկա են դասավանդման բազմաթիվ ռազմավարություններ, և յուրաքանչյուր ուսուցիչ պետք է իրազեկված լինի դրանց մասին, որպեսզի կարողանա ընտրել, թե որն է ամենահարմարը՝ կախված դասի թեմայից, սովորողների նախասիրություններից և ունակություններից: Դրանք գործողություններ, գործիքներ և ռեսուրսներ են, որոնք օգտագործվում են ուսուցչի կողմից՝ մեծացնելով հավանականությունը, որ սովորողները կհասնեն ուսումնառության նպատակներին և սահմանված վերջնարդյունքներին[9]:

Եվ ինչպես ռուս մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին է նկատել՝ «**Այն երեխան, որի զարգացումը բռնի կերպով չի աղճատվել, մեծ մասամբ հինգ կամ վեց տարեկանում, արդեն իր մայրենի լեզվով խոսում է աշխույժ և ճիշտ: Սակայն մի մտածեցեք՝ ինչքա՞ն գիտելիքներ, զգացմունքներ, մտքեր, տրամաբանություն և նույնիսկ փիլիսոփայություն է հարկավոր, որպեսզի կարելի լինի որևէ լեզվով խոսել այնպես, ինչպես իր մայրենի լեզվով խոսում է վեց կամ յոթ տարեկան ոչ հիմար երեխան: Շատ են սխալվում նրանք, ովքեր կարծում են, թե երեխայի կողմից մայրենի լեզուն յուրացնելու ընթացքում գործում է միայն հիշողությունը: Դա չէր բավականացնի նրա համար, որպեսզի մեր մտքում տպավորեինք որևէ լեզվի բոլոր բառերը, այլև նույնիսկ այդ բառերի բոլոր հնարավոր կապակցություններն ու նրանց բոլոր ձևափոխությունները…**»[10]:

[9] «Ներառող դասավանդում », էջ՝ 101:
[10] Ուշինսկի Կ. Գ., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1949, էջ 129-130:

1.2 Մանկավարժական հմտությունների և մեթոդների միջոցով կրթական կարիքները բավարարելու գործնեության ծավալում

«Դաստիարակության խնդիրն է՝ ընդգրկել մարդու գոյության և էության երեք կողմը միասին, այն է՝ մարմինը, հոգին և միտքը» Ղ. Աղայան

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Օրինակ Ֆրայերի մոդելը մեզ օգնում է հայտորոշել, ձևավորել և ամփոփել սովորողների գիտելիքներն ու ձեռքբերումները:Շատ արդյունավետ գործիք է, որը ես օգտագործում եմ սովորածը պարզելու համար:Քառաբաժանի կենտրոնում գրում եմ հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրե՛լ

օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը[11]:

Հաջորդը գիտելիքի դոմինոն է:

Սովորողները նստում են մեծ սեղանի շուրջ:

Քայլ 1 - Բոլոր սովորողները ստանում են առնվազն 1 քարտ՝ կախված թեման ամփոփող հարցերի քանակից և սովորողների թվից:

Քայլ 2 - Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր մոտի քարտը, վրայի հարցը կարդալով, դնում է սեղանին:

Քայլ 3 - Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և իր քարտը դնում սեղանին՝ նախորդ քարտի հարցի շարունակությամբ, ու կարդում իր քարտի հարցը:

Քայլ 4 - Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր քարտերը:

Քայլ 5 - Ավարտին շրջվում են բոլոր քարտերը, և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի դարձերեսին երևում է թեմայի կարևոր հասկացությունը կամ միտքը:

Օրինակ՝ արդար աշխատանքն արժանի է արդար վարձատրության:

Քայլ 6 - 2-3 աշակերտ արտահայտում է վերջնական մտքի վերաբերյալ սեփական մոտեցումները:

Մտքերի հոսք

Նոր նյութը բացատրելուց հետո ուսուցիչը դադար է վերցնում և աշակերտներին առաջարկում գրել, թե ինչ հասկացան նոր նյութից: Այնուհետև ուսուցիչը կարող է շարունակել նյութը բացատրել կամ կարող է առաջարկել զույգերով աշխատել:

[11] Ուսուցման արդյունավետ հնարներ , Երևան 2020, էջ՝ 34:

• Նշե՛ք մեկ բան, որը կուզենաք սկսել։

• Նշե՛ք մեկ բան, որը կուզենաք դադարեցնել։

• Նշե՛ք մեկ բան, որը կուզենաք շարունակել։



Հարցեր Հարցեր, որոնք հնարավորություն են տալիս պարզել, թե ինչ չափով են աշակերտները յուրացրել թեման:

• Ինչո՞վ X-ն ու Y-ը իրար նման:

• Ո՞րն է նյութի հիմնական գաղափարը:

• Որո՞նք են X-ի ուժեղ և թույլ կողմերը:

• Ինչպե՞ս է X-ը կապված Y-ի հետ:

• Համեմատե՛ք X-ն ու Y-ը՝ ըստ Z չափանիշի:

• Որո՞նք են խնդրի լուծման տարբերակները:

• Ի՞նչը չեք հասկացել:

9. Մետաիմացության թերթիկ



Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ:

Ուսուցման ընթացքում զգալի փոփոխություն է կրում կրտսեր դպրոցականի **մտածողությունը**[12]: Կրտսեր դպրոցականը (հատկապես 6-8 տարեկան) մտածում է կոնկրետ կատեգորիաներով՝ հիմնվելով կոնկրետ առարկաների և երևույթների ակնառու հատկությունների և որակների վրա: Ուսուցման ազդեցության տակ տեղի է ունենում աստիճանական անցում երևույթների

[12] Մարկոսյան Ն.Ռ., Տարրական դպրոցի մանկավարժություն, 2016

արտաքին կողմի իմացությունից դեպի նրանց էության իմացումը, սովորում են անել համադրումներ, ընդհանրացումներ, ստեղծում են պատճառահետևանքային կապեր և անում են որոշակի եզրահանգումներ:

Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը: Մեր գիտելիքների պաշարը պահեստավորվում է երկարատև հիշողության մեջ: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

հետազոտական աշխատանքներն իրականացնելիս , հանգեցի այն եզրակացության, որ ուսումնառության կազմակերպումը, որը ենթադրում է տեղեկատվությունը սովորողներին հաղորդելու, նրանց ընկալումը ստուգելու, դասապրոցեսի ժամանակ ակտիվ մասնակցությունը խթանելու մեթոդների և մոտեցումների ամբողջություն, պետք է կիրառվի բոլոր ուսումնական հաստատություններում:

Ուսումնական գործընթացի լավ ձևավորման համար ուսուցիչները պետք է մշտապես գնահատեն իրավիճակները՝ ապահովելու հարգանքը սովորողների կրթության իրավունքների նկատմամբ և մշտապես պլանավորեն նրանց կրթական կարիքների բավարարումը: Միաժամանակ ուսուցիչները պետք է միշտ պատրաստ լինեն փոփոխելու իրենց պլանները, եթե դրանք արդյունավետ չեն: Նյութի ներկայացման, սովորածն արտահայտելու և աշակերտներին դասագործընթացում ներգրավելու տարբեր միջոցների վերջնական նպատակն այն է, որ դրանք մատուցվող նյութը հասանելի ու հասկանալի դարձնեն աշակերտների համար՝ նպաստելով ինքնուրույն սովորելուն: Տեխնոլոգիաները, հասակակիցների օժանդակությունը, դասավանդման տարբեր ձևերը և սովորողների ուժեղ կողմերի օգտագործումը նպաստում են «կրթություն բոլորի համար» շարժումը վերջնական նպատակին հասցնելուն, սակայն դրա համար անհրաժեշտ է, որ ուսուցիչները ստանձնեն ուսուցումը տարբեր սովորողներին համապատասխան ձևով մատուցելու հանձնառություն: Այս աշխատանքը դժվար է և ժամանակատար, սակայն կրթության բարելավված համակարգի և բոլոր սովորողների ուսումնառության պտուղները քաղելու համար արժե գործադրել այդ ջանքերը:

Լավագույն կրթական համակարգը ոչ միայն հեշտացնում է ուսուցումը, այլև նպաստում է բազմազանություն ունեցող սոցիալական աշխարհում երեխայի ներգրավմանը՝ ապահովելով համապատասխան պայմաններ բոլոր դպրոցական միջոցառումներին՝ մրցույթներին, ներկայացումներին, էքսկուրսիաներին նրա ակտիվ մասնակցության համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ամոնաշվիլի Շ.Ա., Բարև երեխաներ, Ձեռնարկ ուսուցչի համար, 1990

2.Կուրտեցկի Վ. Ա., Մանկավարժական հոգեբանական հիմունքներ Երևան,1976

3.Մանուկ Խաչատրյան, Միեր Դավթյան, «Դասավանդման ժամանակակից մոտեցումներ և մեթոդներ», Երևան, 2019

4.Մարկոսյան Ն.Ռ., Տարրական դպրոցի մանկավարժություն, 2016

5.Ներառական կրթության ռազմավարություններ ,Երևան, 2019

6.Ներառող դասավանդում, Երևան 2023

7.Սիմոնյան Ց., Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության,Երևան,1971

8.Ուսուցման արդյունավետ հնարներ , Երևան 2020

9.Ուշինսկի Կ. Գ., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1949

10.Подласый И.П., Петагогика начальной школы: учеб.для студ.пед.училищ и колледжей, Москва, 2004